Գ. ՄԱՀԱՐԻ

# ԶՐՈՒՅՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ



ՆԿ. Ս. ՌԱՇՄԱՃՅԱՆԻ

891.995
Մ-19

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

21.06.2013

11074

# ՁՐՈՒՅՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ

*(Պատանի մանուկների և մանուկ պատանիների համար)*

Ամեն տարի, հենց վոր հասան
Աշնան ամպերն ու անձրևը,
Նա չե գալիս, հարազատը,
Քաղցր է լսել նրա ձենը·
Քաղցր է հիշել հնից, նորից,
Հնից նորից սար ու ձորից·

Նոյեմբերյան ամիսն է էդ,—
Կարմիր ամիս, կարմիր ալիքեր,
Կյանքը գալով վարարած գետ,
Ափից ելավ, ափը քանդեց·
Հասեց ազատ մեր հողերով;
Մեր հողերի չոր կողերով·

Էդ ամիսն է, վոր մեզ հասավ
Մեծ Լենինի գործը հզոր,
Անպարտելի, հաղթանական,
Վոր ծագել է ու կա էսոր·
Ու հիմա կանգնած եղպես
Դարերի մեջ անհաս ու վես։

Վոնց հեքիաթի ծանոթ հսկան
Կանգնեց յերկու աշխարհի մեջ,—
— Աշխատողներ, վորքան վոր կաք,—
Առաջ,—կա մի կռիվ, մի վեճ,
Ու էդ վեճը հին է ու մեծ,
Նրա լուծման ժամը հնչեց։

Հնից-հնից տանջել են մեզ,
ու նստել են մեր վզերին՝
Լսել ենք մենք, ցեղել ենք հեզ,
Չենք մտածել կռվի մասին·
Մերն է հողը, քաղաքները,
Մենք ենք նրա արդար տերը։

Ետևս տանց էդ մեծ մարդը,
Ու լայնարձակ Ռուսաստանում
Հոկտեմբերին ծաղկեց վարդը,
Կռիվ ցեղավ, հասեց արյուն·
Արյուն հասեց հորդ ու վարար,
Արյուն հասեց ազատարար։

Վոտքի ելան քաղաքներից,
Ու հողերից ռուսական,
Վոտքի ելան ձորա ու դերի,
Ու շարքերը բանվորական,
Ցուրտ Սիբիրից մինչև Ռոստով,
Մինչև Օդեսա, մինչև Մոսկով·

Արյուն հասեց· Ազատ յերկրում
Յեղան կարգեր բանվորական,
Բանվորական ձեռն եր ցերգում
Են աշխարհում—Կարմիր հագած
Ծով ու ցամաք, քաղաք ու գյուղ
Հանք ու ավան, պալատ ու հյուղ։

Իսկ մեր յերկրում դաշնակ ու սո
Իսկ մեր յերկրում Ամերիկայի[ն],
Զոր մարտին եր դաժան խոսում
Յեղ եր քսում չարչու հային·

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

24327-Կ

891.981
Կ-19

2011-07



Վողջ յերկիրը ավեր—վերան,
Ա վեր—վերան պատ ու գերան։

Ենքան մանուկ մեռան անհաց,
Ենքան կանաչ ծիլ ու ծաղիկ,
Քաղցը յեկավ համատարած,
Վերի Թաղից, վարի Թաղից.
Ցեկավ, շարժեց իր գերանդին
Կյանքեր հնձեց լավ ու անդին...

Ենքան Մխո, ենքան Հարո,
Ենքան Սիրուշ, ենքան Արսեն,
Ենքան Մարո, ենքան Կարո,
Վո՞րը հիշեմ, վո՞րը ասեմ.
Վողջ յերկիրը մահ ու վերան,
Մահ ու վերան, մահու բերան։

Ցերկրի տերը՝ խմբապետը,
Խմբապետը, նրա փետը,
Ամերիկացու սրնոտ ձեռքը,
Խատխռովի ուռած դեմքը,
Քաղցի, հացի, լացի տենդը,
Ու սրանց հետ պարլամենտը։

Մաուզերի մահու յերգը,
Ցերկրում հոսող արյան գետը,
Մահու ձեռքը, մահու ձեռքը,
Մահու հնձած դաժան բերքը.
Գաղթողների շվար յերթը
Ու սրանց հետ պարլամենտը...

Հենց են դաժան, վատ օրերին,
Մայրաքաղաք Ցերևանում,
Հազար մարդիկ լսել եյին
Գործի մասին են մեծանուն,
Վոր գնգում եր Ռուսաստանում,
Կարմիրների մեծ վոստանում,

Կանչում եր են գործը որի
Ձայնով հուժկու, գրոշով վես—
—Պրոլետարներ վողջ աշխարհի,
Վոտքի կանգնեք, միացեք մեզ...
Հասավ են ձենը մեր յերկրին,
Ինչպես հեռու ձենը յերգի...

Ու են հզոր, պարտ յերգով
Ընկերները անցան գործի,
Լենինյան վեհ դրոշի ներքո,
Իմաստությամբ նրա փորձի.
Այդ մի խումբ եր փոքրաքանակ,
Վորը հետո դարձավ բանակ։

Համախմբվեցին, յեկան, յեկան,
Քաղաքներից, հողից, հանքից,
Նոր ընկերներ հերոսական,
Մարտիկները նոր աշխարհի,
Մարտիկները նոր մարտերի,
Նո՛ր մարտերի, նո՛ր արտերի։

Հալածվեցին նրանք դաժով,
Բռնվեցին ու բանտ նստան.
Բայց ունեյին ուժ ու կորով,
Նայում եյին կյանքին վստահ.
Գաղադել եր պարլամենտը
Ու բռնել եր նրան տենդը։

Բյան Թիֆլի մայիս ամսին
Վոտքի յելան քաղաք ու գյուղ,
—Մահ բուրժուային, կորչի, — ասին,
Կորչի ախրող մաուզեր Թող
Քանդենք հինը, նրա հետը
Սարկության վերջին բերդը։

Մենք ուզում ենք ապրել ազատ,
Ապրել ազատ ու անարգել,



Փոքր բեգ, ժայռ, մեզ հարազատ,
Բոլշևիկյան կարմիր գարուն,
Որ բացվում ես չերկրի վրա,
Քանի՜ նոր հիմա, քանի՜ նոր հիմա...

Եռալեռ սոխ, լեռան փոսէ
Ու դղրդոց լեռները վաղ,
Կյանքը կապից կարմիր գոտի,
Թնդաց լեռներում Լենինյան կոչ.
Լենինյան կոչ, վեհ ու արդար;
Վեհ ու վճռար, ապստամբար:

Վոտքի ելավ Երևանը,
Ալեքպոլը—Լենինական,
Ղարսը կանգնեց, Դիլիջանը,
Կարմիր Լոռին, Ելենովկան.
— Զենք, մարտական կարմիր սրեր, —
Կարմիր հագած սար ու ձորեր:

Իրար անցան տերերը ժամին,
Վոտքի ելան խաժամուժ, չարչին,
Սրբազան, աղա, պարոն ու բանտ,
Խաչ, մաուզեր, զնդան, դաշնի,
Ու խեղդեցին մայիսը մեր,
— Արնոտ փայտեր, արնոտ սրեր

Հասավ նրանց ու ծր Թևանստ'
Նշանն ասես արյան զրած,
Ավանները հեռու թե մոտ,
Ու կանգնեցին նրա գլխաց
Ընկերները հեռավորան..
Փառք հոգի փառքով ընկան...

Նորից երկրում շաչյուն ու սով,
Նորից երկրում ամերիկացին,
Չար մարդկյե էր դաժան խառնած,
Յուղ էր քամում չարչու հացին.

Վողջ երկիրը ավեր, վերան;
Ավեր, վերան պատ ու գերան:

Նորից տեր էր խմբապետը,
Խմբապետը, նրա փեսը,
Մաուզերի մահու երգը,
Մահու հնձած դաժան բերքը,
Գաղթողների չվող երթը,
Փախչի, լացի, հացի տենդը...

Արթուն էր մեր պարտված ուժը,
Անընկճելի ու վոխեբրիժ,
Ու ծվատված էր դրոշով,
Պատրաստվում էր նոր զրոհի,
Հավաքում էր ընդեր ցրիվ,
— Վերջին կռիվ, վերջին կռիվ...

Հավաքվեցին նորից, եկան,
Քաղաքներից, հողից, հանքից,
Նոր ընկերներ հերոսական,
Մարտիկները նոր աշխարհի,
Մարտիկները նոր մարտերի,
Նոր մարտերի, նոր տարերի:

Նորից ելավ Երևանը.
Ալեքպոլը—Լենինական,
Ալլահվերդին, Դիլիջանը,
Կարմիր Լոռին, Ելենովկան.
Նոյեմբերյան կարմիր սրեր,
Կարմիր հագած սար ու ձորեր:

Ու եկ հոսում անհամար
Մի կույտ հոգի, հանքի մարդը,
Մյուս կողմը մայրն ու չար
Նրա սիրաք յափող սարդը—
Զարկվեց վերջին կռիվը մեծ,
Նոյեմբերը երկրին սիրեց:







Մենք հաղթեցինք եղ մեծ կռվում,
Հիմքը դրինք նոր աշխարհի,
Եդ մասին է հիմի գրում
Ձեզնով հպարտ ձեր Մահարին·
Ե՛դ է յերգում կյանքը մեր նոր,
Եդ է հերքում հինը մեռնող։

Ընկավ տերը արնոտ թախտից,
Նրա համար չկա դարուն,
Ու մեր ուժը պիտի հաղթի
Վո՛ղջ աշխարհում, վո՛ղջ աշխարհում,
Վողջ աշխարհում Լենինյան կոչ,
Ու Լենինյան կարմիր բողբոջ։

Բայց չի մեռել մեր թշնամին,
Իր վոտները թափ է տալիս,
Ուզում է նա արյուն հանի,
Ուզում է նա մեռած մայիս.
Ուզում է նա դաշնակ շեֆը,
Դաշնակ շեֆը, նրա քեֆը։

Ուզում է նա կոնդնի վոտի
Ու յետ խլի հող ու քաղաք,
Ուզում է, վոր արյուն հոտի
Մեր յերկիրը վեհ ու խաղաղ,
Ուզում է մեզ նորից կապի,
Մեր քրտինքը նորից լափի։

Մենք անհաղթ ենք ու չենք զիջի
Մեր գիրքերը արնով ներկած,
Ու կտանք մեր ուժը վերջին,
Կը քայլենք մեր ճամբին յերկար,
Լենինյան վեհ դրոշի ներքո,
Ու Լենինյան հզոր յերգով։

Ու կհասնենք մինչև վերը,
Բարձունքները դեռ անհանգիստ,
Մինչև պայծառ գագաթները
Նոր աշխարհի ու նոր կյանքի·
Մինչև վերջին մարտը արի,
Հոկտեմբերը վողջ աշխարհի...

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
[illegible] ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Մենք
Հիմքը
Եղ մա
Ջեզնո
Ե՛ղ և
Եղ և

Ընկալ
Նրա Գ
Ու մեն
Վողջ
Վողջ
Ու Լեն

Բայց
Իր վո
Ուղու
Ուղու
Ուղու
Դաշնա



ՀՀ Ազգային գրադարան
NL0400690
ZUUЯ—Арм. ССР

ԳԻՆԸ 75 Կ.

11014



Г. МААРИ

# БЕСЕДА О НОЯБРЕ

ГИЗ ССРА ЭРИВАНЪ

Պետհրատ № 2428 Գլավլիտ № 7996 (բ)
Տիրաժ 3000 Վիժ. Պետհրատի Տպ. № 3448